«Մարզադաշտի տրիբունայի և պահեստի կառուցման(Թումանյան փողոց 14/1) աշխատանքների»
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/06»**

ք. Կապան «25» մարտ 2026թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Վիլաշին>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վիլեն Հակոբյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/06» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացուցային գրաֆիկի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել ....... օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյթյունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի

կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին

չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6840000 (վեց միլիոն ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որից 1140000 (մեկ միլիոն մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն իրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների խախտում | 10000 ՀՀ դրամ |
| 2 | շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման նորմերի խախտում | 10000 ՀՀ դրամ |
| 3 | գ/կահավորման նորմերի խախտում | 10000 ՀՀ դրամ |
| 4 | տեխնիկական անվտանգության նորմերի խախտում | 10000 ՀՀ դրամ |
| 5 | սանիտարահիգիենիկ նորմերի խախտում | 10000 ՀՀ դրամ |
| 6 | բնապահպանական(այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերի խախտում | 10000 ՀՀ դրամ |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Կապանի համայնքապետարան | «ՎԻԼԱՇԻՆ» ՍՊԸ |
| Ք. Կապան, Չարենցի 1 | Հասցե՝ Սյունիքի մարզ, ք.Կապան, Ռ.Մինասյան 3/3 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՎՀՀ՝ 09428738 |
| ՀՀ 900312450076 | Բանկ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ, |
| ՀՎՀՀ 09426088 | Հ/Հ՝ 1570078112330100 |
| ------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ | ------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված թիվ 1

« 25 » մարտ 2026թ. կնքված

«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/06» ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

*Մարզադաշտի տրիբունայի և պահեստի կառուցման(Թումանյան փողոց 14/1)*

աշխատանքների

**հազ.դրամ**

| N | Աշխատանքի անվանումը | Չափման միավոր | Քանակը | Մեկ միավորի ընդհանուր արժեքը | Ընդհանուր արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 5 | | |
| | **Պահեստ** | | | | |
| | **Հողային աշխատանքներ** | | | | |
| 1 | Հիմքերի փորում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում | խմ | 5,78 | 7,38 | 42,63 |
| 2 | Խրամուղու վերջնամշակում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում | խմ | | 7,38 | 0,00 |
| 3 | Հողի հետադարձ լիցք ձեռքով | խմ | 1,92 | 1,77 | 3,41 |
| | **Հիմքեր** | | | | |
| 1 | Խճի նախապատրաստական շերտի կառուցում հիմքերի տակ 100մմ | խմ | 0,90 | 9,95 | 8,95 |
| 2 | Միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների կառուցում Բ 20 դասի բետոնով | խմ | 2,96 | 90,22 | 267,05 |
| 3 | Ամրան Ф 8A I | տ | 0,047 | 394,87 | 18,56 |
| 4 | Ամրան Ф 14 A III | տ | 0,078 | 459,36 | 35,83 |
| 5 | Հիմքերի ջրամեկուսացում բիտումային մածիկով 2 շերտ | քմ | 16,50 | 1,14 | 18,87 |
| | **Ե/բետոնե հիմնակմախք** | | | | |
| 1 | Միաձույլ ե/բետոնե սյուների կառուցում Բ 20 դասի բետոնով | խմ | 0,672 | 112,13 | 75,35 |
| 2 | Ամրան Ф8 AcI | տ | 0,025 | 394,87 | 9,87 |
| 3 | Ամրան Ф14 A500c | տ | 0,105 | 459,36 | 48,23 |
| 4 | Միաձույլ ե/բ հակասեյսմիկ գոտու կառուցում Բ 20 դասի բետոնով | խմ | 0,888 | 80,80 | 71,75 |
| 5 | Ամրան Ф8 AcI | տն | 0,0207 | 394,87 | 8,19 |
| 6 | Ամրան Ф14 A500c | տն | 0,075 | 459,36 | 34,22 |
| 7 | Միաձույլ ե/բ բարավորի կառուցում B 20 դասի բետոնով | խմ | 0,056 | 103,02 | 5,77 |
| 8 | Ամրան Ф 8 A-I | կգ | 2,77 | 1,58 | 4,37 |
| 9 | Ամրան Ф 14 A-III | կգ | 4,84 | 1,58 | 7,64 |
| | **Պատեր** | | | | |
| 1 | Պատերի կառուցում 20,0 սմ հաստությամբ խարամաբետոնե բլոկներով 400*200*200 | խմ | 6,83 | 31,58 | 215,70 |
| 2 | Պատերի ամրանավորում ամրան Ф8 AI | տն | 0,024 | 488,35 | 11,72 |
| | **Տանիք** | | | | |
| 1 | Վրադիր էլեմենտների տեղադրում մինչև 20կգ քաշով | տ | 0,065 | 125,48 | 8,16 |
| 2 | Թիթեղ 150x150x10 | քմ | 0,27 | 44,87 | 12,11 |
| 3 | Ամրան Ф14 A500c | կգ | 43,56 | 0,46 | 20,01 |
| 4 | Մետաղական կմախքի մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներով | տն | 0,125 | 97,32 | 12,17 |
| 5 | խողովակ N 80 x 40 x3,0 պրոֆիլի | մ | 10,2 | 2,63 | 26,82 |
| 6 | խողովակ N 40 x 30 x 3 պրոֆիլի | մ | 22,4 | 1,57 | 35,23 |
| 7 | խողովակ N 20 x 20 x 2 պրոֆիլի | մ | 6,0 | 0,57 | 3,45 |
| 8 | Տանիքի ծածկույթի կառուցում պրոֆիլավոր գունավոր ցինկապատ թիթեղով 0,5մմ հաստությամբ КП 18-0,5 | քմ | 9,55 | 8,05 | 76,91 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9 | Կախովի ջրորդանի կառուցում գունավոր ցինկապատ թիթեղից 0.55 մմ հաստ. | գծմ | 7,8 | 9,44 | 73,64 |
| 10 | Ջրորդան խողովակների տեղադրում ցինկապատ գունավոր թիթեղով Փ-100 մմ տրամագծով | մ | 3,0 | 6,95 | 20,84 |
| 11 | Ջրորդան ձագարներ գունավոր | հատ | 1,00 | 3,42 | 3,42 |
| 12 | Տանիքի ջերմամեկուսացում փրփրապոլիստիրոլով 5.0սմ | քմ | 7,84 | 2,55 | 20,03 |
| 13 | Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու շերտ | քմ | 5,60 | 1,57 | 8,79 |
| 14 | Կախովի առաստաղի կառուցում գիպսակարդոնե սալիկներով ջրակայուն, 15մմx1,2մx2,4մ | քմ | 7,84 | 4,98 | 39,02 |
| | **Պատուհաններ** | - | | | |
| 1 | Պատուհանի բլոկի տեղադրում մետաղապլաստից սպիտակ 6.0սմ ապակե փաթեթով 4x4 սմ բացվող հայկական արտադրության պրոֆիլ կամ համարժեք 2 հատ | քմ | 2,25 | 32,29 | 72,66 |
| 2 | Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 25սմ լայն. սպիտակ | քմ | 2,25 | 0,96 | 2,17 |
| 3 | Պատուհանագոգերի արժեքը 25սմ լայն. սպիտակ | մ | 1,50 | 3,16 | 4,74 |
| 4 | Պատուհանների արտաքին ջրահեռացման հարթակների կառուցում բազալտե սալիկներից 3.0 սմ հաստությամբ | քմ | 0,30 | 16,95 | 5,08 |
| | **Դռներ** | | | | |
| 1 | Դռան բլոկների տեղադրում մետաղապլաստե սպիտակ խուլ 60մմ ապակեփաթեթով 4+4մմ հայկական պրոֆիլ, կամ համարժեք | քմ | 2,10 | 41,37 | 86,87 |
| | **Հատակ** | - | | | |
| 1 | Խճի նախապատրաստական շերտի կառուցում 10,0սմ հաստությամբ | խմ | 0,78 | 16,87 | 13,16 |
| 2 | Բետոնե հատակի կառուցում Բ 20 դասի բետոնով 6,0սմ հաստությամբ | խմ | 0,47 | 52,66 | 24,77 |
| 3 | Հարթեցնող շերտի կառուցում 30մմ հաստությամբ (ներքին շերտ) | քմ | 7,84 | 1,61 | 12,63 |
| 4 | Ջրամեկուսիչ շերտի կառուցում իզոգամով | քմ | 7,84 | 4,82 | 37,78 |
| 5 | Պրեսգրանիտե հատակի իրականացում 600 x 600 | քմ | 7,84 | 11,76 | 92,19 |
| 6 | Պրեսգրանիտե հատակի շրիշակների կառուցում 10սմ բարձրությամբ | մ | 13,40 | 1,55 | 20,78 |
| | **Ներքին հարդարման աշխատանքներ** | - | | | |
| 1 | Պատերի սվաղում գաջե շաղախով | ք.մ | 35,75 | 3,08 | 110,24 |
| 2 | Դռների և պատուհանների շեպերի սվաղում գաջե շաղախով | քմ | 0,97 | 7,55 | 7,33 |
| 3 | Պատերի ծեփամածկում և սոսնձաներկում լատեքս ներկով | քմ | 35,8 | 2,23 | 79,61 |
| 4 | Գիպսաստվարաթղթե առաստաղի քսահարթում և սոսնձաներկում լատեքս ներկով | քմ | 7,84 | 2,64 | 20,71 |
| | **Արտաքին հարդարման աշխատանքներ** | - | | | |
| 1 | Արտաքին պատերի սվաղում ցեմենտավազե շաղախով | ք.մ | 45,57 | 3,20 | 145,82 |
| 2 | Արտաքին պատերի (ցոկոլի) երեսապատում բազալտե սալիկներով 30 մմ հաստությամբ | քմ | 4,38 | 20,45 | 89,56 |
| 3 | Արտաքին պատերի ներկում ջրադիմացկուն ճակատային ներկով | քմ | 45,57 | 1,50 | 68,18 |
| | **Ընդամենը պահեստ** | | | | **2143,02** |
| | **Տրիբունա** | | | | |
| 1 | Կետային հիմքերի փորում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում | խմ | 0,86 | 6,49 | 5,59 |
| 2 | Խճի նախապատրաստական շերտի կառուցում հիմքերի տակ 100մմ | խմ | 0,144 | 9,95 | 1,43 |
| 3 | Բետոնե հիմքերի կառուցում Բ20 դասի բետոնով | խմ | 0,320 | 66,60 | 21,31 |
| 4 | Հողի հետադարձ լիցք ձեռքով | խմ | 0,40 | 1,46 | 0,58 |
| 5 | Ներդիր էլեմենտների տեղադրում մինչև 20,0կգ քաշով 4 հատ | տ | 0,0105 | 125,48 | 1,32 |
| 6 | Թիթեղ 200x200x10 | քմ | 0,16 | 44,87 | 7,18 |
| 7 | Ամրան Փ14 A III | կգ | 8,70 | 0,46 | 4,00 |
| 8 | Մետաղական հիմնակմախքի մոնտաժում | տ | 0,451 | 179,80 | 81,16 |
| 9 | խողովակ N 80 x 80 x 3,0 պրոֆիլի | մ | 10,720 | 3,57 | 38,32 |
| 10 | խողովակ N 80 x 40 x 3,0 պրոֆիլի | մ | 24,960 | 2,63 | 65,64 |
| 11 | խողովակ N 40 x 40 x 3,0 պրոֆիլի | մ | 66,520 | 1,66 | 110,30 |
| 12 | Թիթեղ 100x100x10 | քմ | 0,260 | 44,87 | 11,67 |
| 13 | Ակոսավոր թիթեղ 40.0մմ հաստությամբ | քմ | 2,550 | 18,28 | 46,61 |
| 14 | | քմ | 6,90 | 8,05 | 55,57 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Տանիքի ծածկույթի կառուցում պրոֆիլավոր գունավոր ցինկապատ թիթեղով 0,5մմ հաստությամբ КП 18-0,5 | | | 0,00 | 0,00 |
| 15 | Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ | քմ | 20,100 | 1,57 | 31,55 |
| 16 | Պլաստմասե նստարաններ | հատ | 18,00 | 8,48 | 152,63 |
| | **Նստարաններ** | | | | |
| 17 | Մետաղական հիմնակմախքի մոնտաժում | տ | 0,334 | 179,80 | 60,05 |
| 18 | խողովակ N 40 x 40 x 3,0 պրոֆիլի | մ | 14,200 | 1,66 | 23,55 |
| 19 | Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ | քմ | 2,272 | 1,57 | 3,57 |
| 20 | Պլաստմասե նստարաններ | հատ | 35,00 | 8,48 | 296,79 |
| | **Ընդամենը տրիբունա** | | | | **1018,80** |
| | **Դարպասներ** | | | | |
| 1 | Մետաղական ցանկապատի և դարպասի ապամոնտաժում | տ | 0,3620 | 41,94 | 15,18 |
| | **Գլխավոր դարպաս** | | | | |
| 1 | Կետային հիմքերի փորում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում | խմ | 0,980 | 6,49 | 6,36 |
| 2 | Խճի նախապատրաստական շերտի կառուցում հիմքերի տակ 100մմ | խմ | 0,108 | 9,95 | 1,07 |
| 3 | Բետոնե հիմքերի կառուցում B20 դասի բետոնով | խմ | 0,240 | 66,60 | 15,98 |
| 4 | Հողի հետադարձ լիցք ձեռքով | խմ | 0,63 | 1,46 | 0,92 |
| 5 | Ներդիր էլեմենտների տեղադրում մինչև 20,0կգ քաշով 2 հատ | տ | 0,020 | 125,48 | 2,55 |
| 6 | Թիթեղ 200x200x10 | քմ | 0,120 | 44,87 | 5,38 |
| 7 | Ամրան Ф14 A III | կգ | 10,90 | 0,46 | 5,01 |
| 8 | Մետաղական դարպասի մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից | տ | 0,125 | 118,45 | 14,81 |
| 9 | խողովակ N 80 x 40 x 3,0 պրոֆիլի | մ | 3,90 | 2,63 | 10,26 |
| 10 | խողովակ N 60 x 40 x 3,0 պրոֆիլի | մ | 8,2 | 2,12 | 17,38 |
| 11 | խողովակ N 40 x 40 x 3,0 պրոֆիլի | մ | 29,44 | 1,66 | 48,82 |
| 12 | Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ | քմ | 5,80 | 1,57 | 9,10 |
| | **Դարպաս - 1 2հատ** | | | | |
| 1 | Կետային հիմքերի փորում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում | խմ | 1,310 | 6,49 | 8,51 |
| 2 | Խճի նախապատրաստական շերտի կառուցում հիմքերի տակ 100մմ | խմ | 0,144 | 9,95 | 1,43 |
| 3 | Բետոնե հիմքերի կառուցում B20 դասի բետոնով | խմ | 0,320 | 66,60 | 21,31 |
| 4 | Հողի հետադարձ լիցք ձեռքով | խմ | 0,85 | 1,46 | 1,23 |
| 5 | Ներդիր էլեմենտների տեղադրում մինչև 20,0կգ քաշով 2 հատ | տ | 0,0190 | 125,48 | 2,38 |
| 6 | Թիթեղ 200x200x10 | քմ | 0,160 | 44,87 | 7,18 |
| 7 | Ամրան Ф14 A III | կգ | 6,80 | 0,46 | 3,12 |
| 8 | Մետաղական դարպասի մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից | տ | 0,1480 | 118,45 | 17,53 |
| 9 | խողովակ N 60 x 40 x 3,0 պրոֆիլի | մ | 11,40 | 2,12 | 24,16 |
| 10 | խողովակ N 40 x 40 x 3,0 պրոֆիլի | մ | 20,0 | 1,66 | 33,16 |
| 11 | խողովակ N 20 x 20 x 3,0 պրոֆիլի | մ | 29,44 | 0,57 | 16,93 |
| 12 | Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ | քմ | 7,80 | 1,57 | 12,24 |
| | **Դարպաս - 2 1հատ** | | | | |
| 1 | Կետային հիմքերի փորում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում | խմ | 0,655 | 6,49 | 4,25 |
| 2 | Խճի նախապատրաստական շերտի կառուցում հիմքերի տակ 100մմ | խմ | 0,072 | 9,95 | 0,72 |
| 3 | Բետոնե հիմքերի կառուցում B15 դասի բետոնով | խմ | 0,160 | 66,60 | 10,66 |
| 4 | Հողի հետադարձ լիցք ձեռքով | խմ | 0,42 | 1,46 | 0,62 |
| 5 | Ներդիր էլեմենտների տեղադրում մինչև 20,0կգ քաշով 2 հատ | տ | 0,019 | 125,48 | 2,38 |
| 6 | Թիթեղ 200x200x10 | քմ | 0,080 | 44,87 | 3,59 |
| 7 | Ամրան Ф14 A III | կգ | 3,40 | 0,46 | 1,56 |
| 8 | Մետաղական դարպասի մոնտաժում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից | տ | 0,1232 | 118,45 | 14,59 |
| 9 | խողովակ N 80 x 40 x 3,0 պրոֆիլի | մ | 7,24 | 2,63 | 19,04 |
| 10 | խողովակ N 60 x 40 x 3,0 պրոֆիլի | մ | 12,7 | 2,12 | 26,88 |
| 11 | խողովակ N 20 x 20 x 3,0 պրոֆիլի | մ | 29,44 | 0,57 | 16,93 |
| 12 | Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ | քմ | 5,80 | 1,57 | 9,10 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Ընդամենը դարպասներ** | | | | **412,35** |
| | **Խաղադաշտ** | | | | |
| 2 | Հիմքերի մշակում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում և տեղափոխում 20մ հեռավորության վրա 1 խմ= 1.6տ | խմ | 29,60 | 7,85 | 232,31 |
| 2 | Գրունտի բարձում 0,25 խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով ինքնաթափ ավտոմեքենաներին | 1000 խմ | 0,001 | 1069,74 | 1,07 |
| 3 | Գրունտի տեղափոխում 10.4կմ հեռավորության վրա | տն | 1,70 | 3,84 | 6,53 |
| 4 | Խճի նախապատրաստական շերտի կառուցում 10,0սմ հաստությամբ | խմ | 18,50 | 11,30 | 209,10 |
| 5 | Բետոնե նախապատրաստական շերտի կառուցում Բ-20 դասի բետոնով 6,0սմ հաստությամբ ամրանավորումով | խմ | 11,10 | 52,66 | 584,51 |
| 6 | Ծածկույթի ամրանավորում Bp d=4,0մմ, բջիջը 200x200մմ ամրանային ցանցով 1քմ=1.02 կգ | տ | 0,189 | 26,91 | 5,08 |
| 7 | Ամրանային ցանց BP4,0մմ, բջիջը 200x200մմ | քմ | 185,00 | 0,60 | 111,91 |
| | **Ընդամենը խաղադաշտ** | | | | **1150,52** |
| | **Արտաքին լուսավորություն** | | | | |
| 1 | Կետային հիմքերի փորում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում | խմ | 2,160 | 6,49 | 14,03 |
| 2 | Խճի նախապատրաստական շերտի կառուցում հիմքերի տակ 100մմ | խմ | 0,150 | 9,95 | 1,49 |
| 3 | Բետոնե հիմքերի կառուցում Բ20 դասի բետոնով | խմ | 1,500 | 66,60 | 99,90 |
| 4 | Հողի հետադարձ լիցք ձեռքով | խմ | 0,51 | 1,46 | 0,74 |
| 5 | Մետաղական խողովակների մոնտաժում | տ | 0,2637 | 56,04 | 14,78 |
| 6 | խողովակ Փ 102 x 3 մմ | մ | 36,0 | 6,13 | 220,62 |
| 7 | Ամրան Փ14 A III | կգ | 28,00 | 0,46 | 12,86 |
| 8 | Վերգետնյա մալուխի անցկացում և միացում մոտակա գործող փողոցային լուսավորությանը ԱՎՎԳ 4 x10 մմ² | 100 մ | 1,10 | 70,43 | 77,48 |
| 9 | Լուսարձակների մոնտաժում «լեդ» մակնիշի 100W | հատ | 6,0 | 13,41 | 80,44 |
| 10 | Մալուխի անցկացում խողովակի միջով ՊՊՎԳ 3 x 2.5 մմ² | 100 մ | 0,36 | 86,08 | 30,99 |
| 11 | Մետաղական մակերեսների յուղաներկում երկու անգամ | քմ | 11,304 | 1,57 | 17,74 |
| | **Մալուխի անցկացում** | | | | |
| 1 | Հիմքերի փորում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում | խմ | 20,00 | 7,38 | 147,50 |
| 2 | Խրամուղու լրամշակում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում | խմ | 2,00 | 7,38 | 14,75 |
| 3 | Ավազե փռում խողովակների տակ 10.0սմ հաստությամբ | խմ | 4,00 | 12,95 | 51,82 |
| 4 | Պոլիէթիլենային խողովակների տեղադրում խրամուղում Փ=25x2.3մմ | մ | 100,00 | 0,72 | 72,42 |
| 5 | Ալյումինե մալուխի անցկացում խողովակի միջով ԱՎՎԳ 4 x10 մմ² | 100 մ | 1,10 | 71,90 | 79,09 |
| 7 | Հետադարձ լիցքի իրականացում փափուկ գրունտից ձեռքով 5.0սմ հաստությամբ | խմ | 11,094 | 1,46 | 16,17 |
| 9 | Ավելացված գրունտի բարձում ինքնաթափ ավտոմեքենաներին էքսկավատորով 0,5խմ շերեփի տարողությամբ | խմ | 8,906 | 0,86 | 7,64 |
| 10 | Ավելացած գրունտի տեղափոխում 10.4կմ հեռավորության վրա | տն | 16,031 | 3,84 | 61,61 |
| | **Ընդամենը արտաքին լուսավորություն** | | | | **1022,07** |
| | Ամբողջը | | | | **5746,75** |
| | ԱԱՀ 20% | | | | 1149,35 |
| | **Ընդամենը** | | | | **6896,10** |

* Կապալառուն աշխատանքները կատարում է *Թումանյան փողոց 14/1* հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Կապանի համայնքապետարան
ք. Կապան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312450076
ՀՎՀՀ 09426088

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«ՎԻԼԱՇԻՆ» ՍՊԸ**
Հասցե՝ Սյունիքի մարզ, ք.Կապան,
Ռ.Մինասյան 3/3
ՀՎՀՀ 09428738
Բանկ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570078112330100

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 1.1*
*« 25 » մարտ 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/06» ծածկագրով պայմանագրի*

**Հավելված 1.1**
«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/06» **ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**ՀԱՎԱՍՏՈՒՄ**
**հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին**

<<Վիլաշին>> ՍՊԸ-ն հավաստում է, որ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/06» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով մրցույթի շրջանակում կնքվող պայմանագով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Կապանի համայնքապետարան | **«ՎԻԼԱՇԻՆ» ՍՊԸ** |
| Ք. Կապան, Չարենցի 1 | Հասցե՝ Սյունիքի մարզ, ք.Կապան, |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Ռ.Մինասյան 3/3 |
| ՀՀ 900312450076 | ՀՎՀՀ՝ 09428738 |
| ՀՎՀՀ 09426088 | Բանկ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ |
| | Հ/Հ՝ 1570078112330100 |
| ---------------------------------- | ---------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 2*
*« 25 » մարտ 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/06» ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

Մարզադաշտի տրիբունայի և պահեստի կառուցման(Թումանյան փողոց 14/1) աշխատանքների կատարման

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | *Մարզադաշտի տրիբունայի և պահեստի կառուցման(Թումանյան փողոց 14/1)* աշխատանքներ | *կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օր* | 60 օրացուցային օր |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | *կողմերի միջև կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելու օր* | 60 օրացուցային օր |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312450076
ՀՎՀՀ 09426088

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«ՎԻԼԱՇԻՆ» ՍՊԸ**
Հասցե՝ Սյունիքի մարզ, ք.Կապան, Ռ.Մինասյան 3/3
ՀՎՀՀ՝ 09428738
Բանկ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570078112330100

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*« 25 » մարտ 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/06» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45221139/1 | Մարզադաշտի տրիբունայի և պահեստի կառուցման (Թումանյան փողոց 14/1) աշխատանքներ | | | | 3420000 | 3420000 | 6840000 | 6840000 | 6840000 | 6840000 | 6840000 | 6840000 | 6840000 | 6840000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Չարենցի 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312450076
ՀՎՀՀ 09426088

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«ՎԻԼԱՇԻՆ» ՍՊԸ**
Հասցե՝ Սյունիքի մարզ, ք.Կապան,
Ռ.Մինասյան 3/3
ՀՎՀՀ՝ 09428738
Բանկ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570078112330100

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 4*
*« 25 » մարտ 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/06» ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
հվհհ _________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ___________________________
հվհհ_________________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 4.1*
*« 25 » մարտ 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/06» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ______________________________ -ին կնքված N ____________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

*Հավելված N 5*
*« 25 » մարտ 2026թ. կնքված*
*«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/06» ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ______________-ի և ______________-ի միջև «--» 20 թ. կնքված
Կապանի համայնքապետարան կապալառուի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և ______________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «-------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,
կապալառուի անվանումը

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

______________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.